ՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՆԱՀՅՈՒԱՌԹՅՈՒՆԸ
(ըստ 1996 և 1997թթ. ժողովրդագիտական դիտարկումների)

Վ. Գ. ՍՎԱՉԼՅԱՆ

1453թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի ստումից հետո սուլթան Ֆաթիհ Մեհմեդ Երկրորդն այն դարձնում է օսմանյան պետության նոր մայրաքաղաք՝ վերանվանելով Ստամբուլ: Երկրի ներքին գավառներից[1] նա փոխադրում է հայ վարպետների ընտանիքներ, որոնք ոչ միայն ավելի են ստվարացնում հայ համայնքը, այլև իրենց մտքի և բազկի շնորհիվ գեղեցկություն և փայլ են հաղորդում նորակերտ մայրաքաղաքին:

1461թ. հիմնադրվում է Թուրքիայի Հայոց պատրիարքությունը, որին սուլթանը շնորհում է եկեղեցական և համայնքային որոշ իրավունքներ: Հետագա տարիներին պոլսահայերի թիվը աստիճանաբար բազմապատկվում է Մեքաստիայից, Կեսարիայից, Թոքատից, Ակնից, Մուշից, Կիլիկիայից և այլ գավառներից եկած, աշխատանք որոնող պանդուխտներով: Ջալալիների ապստամբության շրջանում (XVI դարավերջ – XVII դարասկիզբ) պոլսահայ գաղթօջախը համալրվում է ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ վերաբնակիչներով:

Պոլսի հայ համայնքը միատարր չէր: Ամենաստվար խավը բաղկացած էր արհեստավորներից, պանդուխտ մշակներից և սեպագործ բանվորներից: Արհեստավորները համախմբված էին էսնաֆությունների (համքարություն) մեջ: Մեծ համբավ ունեին հայ ոսկերիչները, մետաքսագործները, երկաթագործները, դերձակները ու ժամագործները: Ունևոր դասը կազմված էր հոջաներից, չելեպիներից, հետագայում՝ ամիրաներից, ինչպես նաև առևտրավաճառականական դասի ներկայացուցիչներից, որոնք իրենց դրամագլխի և գործարարության շնորհիվ հասել էին ազդեցիկ դիրքերի, կապեր էին հաստատել արքունիքի հետ և գործում դեր էին կատարում Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքում: Հայ մեծատուններին (ամիրաներ) էին վստահված արքունի պետական կարևոր պաշտոնները: Օրինակ՝ Հարություն Պեզճյան ամիրան սուլթանի խորհրդականն էր, ոսկերչությունն ու դրամահատությունը Տյուզյաններն էին ղեկավարում, վառոդապետությունը՝ Տաայանները, ճարտարապետությունը՝ Պալյանները: Այդ պաշտոնները նրանք վարում էին սերնդից սերունդ՝ ժառանգաբար: Հայերն

---

[1] Հիմք ընդունելով «Օսմանյան պետության պատմությունում» (*Hamer*, Geschichte des Osmanischen Reich 1834, p.524) արտահայտված այն միտքը, թե Կ. Պոլսի գրավումից հետո սուլթան Ֆաթիհ Մեհմեդը նվաճեց Կաֆան (1475թ.) և այնտեղից իր մայրաքաղաքը վախադրեց 40 հազար անձ, Հր. Աճառյանը եզրակացնում է. «Պոլսի հայերը գաղթել են Խրիմից և բնականաբար բոլոր այդ բառերը (թուրքերեն – Վ. Ս.) ստած պիտի լինին Խրիմի թաթարներից, ուստի և Ք-ի փոխարեն հնչում են՝ Խ ճիշտ Նոր-Նախիջևանի հայոց նման» (*Հ. Աճառյան*, Քննություն պոլսահայ բարբառի, Ե.,1941, էջ 9):

ունեցել են նաև Օսմանյան կայսրության կառավարության թղթատարական, հեռագրական, հանրային շինարարության, երկրագործության, արտաքին գործերի և այլ նախարարներ, իսկ հետագայում՝ նաև օսմանյան խորհրդարանի երեսփոխաններ: Ունևորների շարքն են դասվել նաև միջնորդ վաճառականները, որոնք կազմակերպում էին թուրք-եվրոպական ավանդական առևտուրը:

Կ. Պոլսի հայ համայնքն ուներ նաև անվանի մտավորականներ՝ մանկավարժներ, հոգևորականներ, դերասաններ, գրողներ, բժիշկներ, փաստաբաններ, նկարիչներ, երաժիշտներ, որոնք գործուն մասնակցություն էին ցուցաբերում ոչ միայն արքունիքի ու պոլսահայերի, այլև ամբողջ արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին: Պետության կողմից հայ համայնքի ղեկավար էր ճանաչվում Հայոց պատրիարքությունը:

Ինչպես անցյալում, նույնպես և ներկայումս հայ համայնքի կրոնական, կրթական, բարեգործական, գրական և գեղարվեստական բոլոր կազմակերպությունները հենվում են Հայոց պատրիարքության և նրան ենթակա կազմակերպությունների վրա: Հ. Ճ. Սիրունին, անդրադառնալով Կ. Պոլսի եկեղեցիներին, նշում է . «Ամբողջ դարեր հայ եկեղեցին պատնեշ մըն է եղեր հայ ժողովրդի գոյության համար, պահպաներ է իր հովանիին տակ անոր հոգեկան ժառանգությունը, հուսադրեր է զայն փորձությանց ատեն»[2]:

Թուրքիայի հայությունը, իբրև կազմակերպված համայնք, պատրիարքարանի գլխավորությամբ մինչև օրս պահել է կրոնական, կրթական և բարեսիրական հաստատությունները Ստամբուլում: Պատրիարքը պետն է Թուրքիայի հայոց Առաքելական եկեղեցիների և ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից: Նույն ձևով ընտրվում է նաև կրոնական ժողովը: Այժմ Կ. Պոլսի Հայոց պատրիարքն է Ամենապատիվ տեր Սեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը: Հայոց պատրիարքությունը համալրված է նաև ընտրյալ անդամներով, որոնք տարաբնույթ աշխատանքներ են ծավալում զանազան հանձնախմբերում:

Հոգաբարձությունները, որոնք ընտրվում են չորս տարով, կառավարում և ապահովում են ընդհանուր համայնքային հաստատությունները, ինչպիսիք են Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցը, Կարագյոզյան որբանոցը: Հոգաբարձություններն ունեն Տիկնանց և Երիտասարդաց օժանդակ հանձնախմբեր:

Հայ համայնքի հասարակական կյանքի եռանդուն և գործուն օղակները քաղային խորհուրդներն են, որոնք ևս ընտրվում են չորս տարով՝ յուրաքանչյուր քաղի հայ բնակչության կողմից: Թաղային խորհուրդները տեղական համայնքներն ապահովող և կառավարող մարմիններ են, որոնց պաշտոնն է պայծառ պահել քաղի եկեղեցին և դպրոցը:

Համայնքային կրոնական կյանքը կենտրոնացած է եկեղեցիների շուրջ: Ստամբուլում և գավառներում հայերն ունեն 42 եկեղեցի, որոնք բաժանվում են 6 վիճակների. ա. Հին քաղաք – 16 եկեղեցի, բ. Արևմտյան Բոսֆոր – 11 եկեղեցի, գ. Արևելյան Բոսֆոր – 7 եկեղեցի, դ. Իշխանաց կղզիներ – 1 եկեղեցի, ե. Գավառ – 6 եկեղեցի, զ. Կրետե կղզի – 1 եկեղեցի:

---

[2] *Հ. Ճ. Սիրունի*, Պոլիս և իր դերը, հ. Ա , Պեյրութ, 1965, էջ 662:

Թուրքիայի կառավարության թույլտվությամբ և Հայոց պատրիարքության ջանքերով ու համայնքի նյութական միջոցներով, նաև Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի անմիջական հսկողությամբ վերջերս վերանորոգվել են Կեսարիայի Ս. Գր. Լուսավորիչ (1996թ.) ե Սամանդաղի (Մուսա լեռ) Վագըֆ գյուղի Ս. Աստվածածին (1997թ.) եկեղեցիները: Բարեկոչոգվել է նաև Գընալը կղզու Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցին:

Գրեթե բոլոր եկեղեցիներն ունեն իրենց Դպրաց դասը և դպրապետը՝ ընտրված Դպրաց դասի ընդհանուր ժողովի կողմից: Թուրքիայում ներկայումս գործող բոլոր եկեղեցիները մեկը մյուսից հոյակերտ են՝ օժտված բոլոր հարմարություններով, ամենուրեք տիրում է անբասիր մաքրություն ե աստվածահաճո մթնոլորտ: Այդ եկեղեցիների մեջ, բացի ամենօրյա ժամերգություններից ու կիրակնօրյա Ս. Պատարագից, բազում հավատացյալների ներկայությամբ հաճախ են կատարվում հայ քրիստոնեական մկրտություններ, ճոխ ու շքեղ հարսանեկան հանդեսներ, ննջեցյալների հոգեհանգստյան արարողություններ:

Պոլսի առաջին կանոնավոր հայ դպրոցը, որտեղ պատրաստվել են ուսյալ եկեղեցականներ, 1715թ. Սկյուտարի բարձունքին հիմնել է Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի պատրիարքը (1678-1741): Այդ արժանավոր հոգևորականի անվան հետ է կապված նաև Մայր մատենադարանի ստեղծումը և դրա շարունակությունը հանդիսացող Ազգային մատենադարանի հիմնումը, որոնք շատ կարևոր դեր են կատարել հայ մշակույթի զարգացման հետագա գործընթացում:

Այժմ Ստամբուլում գործում են 18 վարժարաններ, ընդ որում՝ հինգ լիցեյ՝ Ղալաթիայի Կեդրոնականը, Թաքսիմի Էսայանը, Սկյուտարի Ս. Խաչը (նախկին Դպրեվանք), Սամաթիայի Սահակյան-Նունյանը և Փանկալթիի Վիեննական Մխիթարյանը: Հիշարժան են Գումգաբուի Պեզճյան Մայր վարժարանը, Մաքրըգյուղի՝ Տատյան, Ֆերիգյուղի՝ Սերամեթճյան, Գատըգյուղի՝ Արամյան-Ունճյան, Թուփգաբուի՝ Լևոն Վարդուհյան, Օրթագյուղի՝ Թարգմանչաց, Եշիլգյուղի՝ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ, Սկյուտարի՝ Գալֆայան-Երմոնյան վարժարանները, Սեմերճյան ճեմարանը, Սամաթիայի և Փանկալթիի Անարատ հղության և Պոմոնթի Վենետիկյան Մխիթարյան վարժարանները և ի վերջո՝ Կարագյոզյան որբանոցը:

Այս ուսումնական հաստատությունները Թուրքիայի պետական կրթական տնօրինության ծրագրի համաձայն և ավանդական հայեցի դաստիարակության հիման վրա շարունակում են իրենց կրթալուսավորական գործունեությունը: Գրեթե բոլոր հայաշատ քաղամասերն ունեն իրենց վարժարանները և մանկապարտեզները: Դպրոցներում, բացի հայոց լեզվի և կրոնի դասերից, բարձր հիմքերի վրա է դրված հատկապես թուրքերենի և այլ օտար լեզուների ուսուցումը, քանի որ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելիս կարևորվում է այդ լեզուների իմացությունը:

Գրեթե բոլոր վարժարաններին կից սիրահոժար հիմունքներով գործում են Սանուց միություններ, որոնք զանազան գեղարվեստական միջոցառումներով (բանախոսություններ, թատերական ներկայացումներ, մարմնամարզական հանդեսներ, համերգներ, ցուցահանդեսներ) և հրատարակություններով ջանում են վսա պահել համայնքի հայեցի մշակութային կյանքը:

Պոլսահայերն ունեն նաև համայնքային մի շարք կազմակերպություններ, որոնցից նշանակալից են Փանկալթիի «Թրքահայ ուսուցչաց հիմնարկը», Կարագյոզյան Սանուց միության՝ Գընալը կղզու «Կազդուրման կայա-

նը», որտեղ Իշխանաց կղզիների տեսուչ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի բնութագրմամբ «համայնքի նվազ բախտավոր մանկիկները կուգան ամառվա ընթացքին մաքուր օդեն, ծովեն և բնությունեն օգտվելու, ֆիզիկապես կազդուրվելու»: Նոր սերունդը մեծ եռանդով է կապված Թաքսիմի մարզական և Շիշլիի մարմնամարզական միությունների հետ:

Կ. Պոլսի հայ համայնքը սերնդից սերունդ սրբությամբ պահում է նաև հայկական 16 գերեզմանատներ, որոնք համայնքի նվիրյալների ջանքերով մշտապես մաքուր են և բարեկարգ:

Պոլսահայ մամուլն ամենայն մանրամասնությամբ արձագանքում է ինչպես աշխարհում և երկրում կատարված իրադարձություններին, նույնպես և համայնքային մեծ ու վտքր հոգսերին: Բացի «Ժամանակ» (խմբագիր՝ Արա Քոչունյան) և «Նոր Մարմարա» (խմբագիր՝ Ռոբերտ Հատտեճյան) հեղինակավոր օրաթերթերից, 1996 թվից լույս է տեսնում և մեծ ժողովրդականություն վայելում երկլեզու (հայերեն և թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթը (խմբագիր՝ Հրանդ Տինք): Ամեն շաբաթ հայերեն և թուրքերեն լեզուներով լույս է տեսնում և եկեղեցիների մեջ ձրիաբար բաժանվում «Պոլսահայ պատրիարքության լրաթերը»: Տեղեկատվական այս հրատարակությամբ հանգամանորեն ներկայացվում են շաբաթվա բոլոր օրերին Հայոց պատրիարքության իրականացրած ազգային և միջազգային արժեք ներկայացնող աշխատանքները: Լույս է տեսնում նաև եկեղեցական, մշակութային և բանասիրական ընդգրկում ունեցող «Շողակաթ» հանդեսը (խմբագիր՝ Մութաֆյան սրբազան):

Համաշխարհային բժշկագիտության նորագույն հայտնագործությունների և Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի տարբեր բաժանմունքներում ներդրված արդիական տեխնիկայի, հիվանդանոց-ծերանոցի առօրյայի և մշտապես կատարվող բարեգործությունների մասին է ավետում «Ս. Փրկիչ» պատկերազարդ, գունավոր և շքեղ ամսագիրը (խմբագիր՝ Մաքրուհի Պ. Հակոբյան):

Լույս են տեսնում նաև Կեդրոնական սանուց միության «Հոպինս» և «Լուսատու», ինչպես նաև Սխիթարյան սանուց միության «Նոր սան», Ուսուցչաց հիմնարկի «Ժպիտ» և Ս. Խաչ լիցեյի աշակերտության գրական-մշակութային «Փունջ» հանդեսները:

Ի պատիվ Թուրքիայի հայ համայնքի, պետք է արձանագրել, որ Հայոց պատրիարքության գլխավորությամբ գործող բոլոր ենթակա եկեղեցիներն ու մշակութային կազմակերպություններն իրենց ամենօրյա եռանդուն միջոցառումներն իրականացնում են շնորհիվ հայ համայնքի խնայողասեր, բայց վեհանձն ներկայացուցիչների սիրահոժար նվիրատվությունների, որոնք, այդ գեղեցիկ ավանդույթը ժառանգելով իրենց արժանավոր նախորդներից, դառնում են իրենց իսկ համայնքի կենսունակության և հարատևության գրավականը:

Պաշտոնական տվյալներով Ստամբուլում ներկայումս հաշվվում են շուրջ 60 հազար հայ, իսկ գավառներում՝ հազիվ 5 հազար: Նրանք զբաղվում են մեծ մասամբ առևտրով և տոհմիկ արհեստներով: Անցյալի պոլսահայ մտավորականության ներկայացուցիչներին հաջորդել են նոր անուններ՝ Ն. Խրախունի, Զահրատ, Ռ. Հատտեճյան, Ա. Տիրազան, Իգնա Մարըսալան, Զ. Պիպեոյան, ինչպես նաև նոր սերնդի նվիրյալ ուսուցիչներ, համբավավոր բժիշկներ, իրավաբաններ, ճարտարապետներ, որոնք մասնագիտացել են Թուրքիայում կամ արտասահմանյան այլ երկրներում և իրենց նպաստն են բերում երկրին ու հայ համայնքին:

Թուրքիայում եղած օրերին, մենք հնարավորություն ունեցանք հանդիպել հայ համայնքի սեռաարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների և գրի առնել շուրջ 1517միավոր բանահյուսական մեծ ու վտքր նյութ:[3]

Պոլսահայոց բանահյուսությունը, հայ ժողովրդի բանավոր մշակույթի բաղկացուցիչ մասը կազմելով, դարերի ընթացքում զարգացել է հայ ժողովրդի բանահյուսական համընդհանուր ավանդներով, սակայն ընդհանրությունների և նմանությունների հետ միասին նաև ներառել է խիստ բնորոշ և ինքնատիպ յուրահատկություններ, որոնք պայմանավորված են նրանց ապրած անցյալ ու ներկա կյանքի պատմահասարակական հանգամանքներով:

Հանրագումարի բերելով մեր գրառած բանահյուսական տարաբնույթ նյութերը՝ հարկ է նշել, որ առաջին անգամ գիտականորեն համակարգված ներկայացվում է պոլսահայոց ժողովրդական բանահյուսության ժառանգությունը՝ իր ժանրային ու թեմատիկ տարատեսակներով: Մեր գրառումների անտիպ հավաքածոն ընդգրկում է՝ I. ԱՐՁԱԿ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ – 258 միավոր, II. ՉԱՓԱԾՈ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ – 131 միավոր, III. ԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ – 1008 միավոր, IV. ԾԵՍԵՐ – 3 միավոր, V. ԵՐԳԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ – 17 միավոր, ընդամենը՝ 1517 միավոր:

Թուրքիայի տարբեր գավառներից Ստամբուլ եկած և բնակություն հաստատած արդի պոլսահայոց պատմականորեն ձևավորված և սերնդից սերունդ ժառանգված բանավոր ստեղծագործության մեջ որոշակի բաժին է կազմում ժանրային ու թեմատիկ բազմազանությամբ հարուստ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ: Այս բաժնում ընդգրկված են՝

1. ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐ (16 միավոր): «Արամ թագավորի որդի Արա Գեղեցիկը» և «Տրովադայի առումը» առասպելների մեջ գերբնական ու չափազանցված գույներով արտացոլված են հայ և հույն ժողովուրդների վաղնջական կյանքում տեղի ունեցած իրական դեպքերն ու դեմքերը: Պատմական այդ իրադարձությունները դիցաբանական մտածողությամբ մեկնաբանված են որպես գերբնական ուժերի արգասիք: Իսկ «Բարիք ըրե՝ ծովը նետե» , «Հովիվ աղջիկը», «Արհեստին ուժը», «Աշխարհ տեսած տղան», «Մարդուն խըսմեթը», «Երջանիկ մարդը» և այլ խոհափիլիսոփայական հեքիաթների թեման երջանկության իմաստը որոնող, վաղանցիկ կյանքի խորհրդավորության դեմ հանդիման կանգնած մարդն է՝ իր առօրյա հոգսերով:

Իրապատում հեքիաթների մեջ («Պզտիկ ախպարը», «Ամենեն անուշը և ամենեն կծուն», «Խմիչքին զորությունը») գովերգվում է աշխատասիրությունն ու պարկեշտ վարքը: Այս հեքիաթներն ընդհանրապես ուսուցողական-դաստիարակչական բնույթ ունեն:

2. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՁՐՈՒՅՑՆԵՐ (11 միավոր): Թուրքիայի հայոց տեղանվանական զրույցներն են, որոնք գողտրիկ ավանդությունների միջոցով մեկնաբանում են զանազան տեղանուններ («Հեյպելի կղզիին Հույսի վանքը», «Մեծ կղզիին Մ. Գեորգ ուխտատեղին», «Պուրկաս կղզիին Ա. Հովհաննես եկեղեցին», «Մուրադատուր Ս. Կարապետը», «Հայր Աբրահամին

[3] Ծագումով պոլսաբնակ, ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի և իր քրոջ՝ Արմենուհի Աճառյանի գրի առած բանահյուսական որոշ նյութեր լույս են տեսել «Ազգագրական հանդեսում» (գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 160-196):

որթատունկը», «Կիլիկիայի Կոռիկոս քերդը», «Խըտըր Բեկի սոսու ծառը» և այլն):

3. ԿՐՈՆԱԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (32 միավոր). թեման մեծ մասամբ աստվածաշնչյան է, քանի որ ըստ պոլսահայերի, «Աստվածաշունչը պետք է ամենուն բարոյականության արմատը դառնա»: Ինչպես օրինակ՝ «Աստծո պատգամը», «Աստծո դրած անունները», «Աստծո տված բախտը», «Աստծո տված պատիժը», «Աստծո նախախնամությունը» և այլն: Սակայն կրոնաբարոյախոսական այս կարգի զրույցները սոսկ աստվածաշնչյան դրվագների պարզ վերարտադրություններ չեն, այլ յուրաքանչյուրն ունի իր սյուժետային գծի ուրույն զարգացումը, որը հասնելով իր գագաթնակետին, ժողովրդական ստեղծագործությանը հաղորդում է ոչ միայն քարոյախոսական երանգ, այլև հասարակական հնչեղություն: Օրինակ՝ «Եթե կու տաս, Աստված քեզի ավելի շատ կու տա», «Աստված բաժանող», «Մուհամմեդի պատգամը», «Մուհամմեդը և հայ Հակոբը», «Սիությունը զորություն է» և այլն:

4. ԶԱՎԵՇՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (53 միավոր): Ծիծաղը մշտապես ուղեկցել է պոլսահային, որն իր կենսունակ և կենսասեր փիլիսոփայությունը խտացրել է ժողովրդական հետևյալ խորիմաստ ասույթի մեջ. «Մեկ քահքահը՝ խալիպ մը պրգոլա (խորոված) կ'արժե»: Նա ծիծաղի միջոցով քննադատել է նաև մարդկային արատները՝ ծուլությունը («Ծույլ հարսը», «Ծույլ ատաղձագործը»), ստախոսությունը («Պարտքը չտվող կոշկակարը», «Դերձակը և հաճախորդը»), հաշվենկատությունը («Հաշվենկատ սափրիչը»), ագահությունը («Դատավորը և ավազակը»), զազրախոսությունը («Փիս քերանը»), գողությունը («Եկեղեցվո գողը», «Մենք Անտուտնը և գողը», «Նորօծ վարդապետը»), քինախնդրությունը («Քեն պահող մարդը»), հարստության տենչը («Տղան և բժիշկը», «Երիտասարդները և հարուստը») և այլն:

Այս բաժնում առանձին շարք են կազմում խենթերին նվիրված զավեշտական զրույցները, որոնց մեջ մտապակասը պատրաստ է նույնիսկ այծի մազերը հաշվել, միայն թե բժիշկն իրեն տուն ուղարկի («Խենթի փյոստեքին»): Սակայն խենթանոց այցելած, խենթերի գլխաքանակը հաշվող առողջ մարդուն «կապվելու խենթը» զարմացնում է իր խելացի խոսքով. «Դուն գնա՛ դուրսինները հաշվե. անոնք մեզմե ավելի շա՞տ են»: Պատասխան, որը ենթադրում է խելացու համբավ հանած մարդկանց խենթության հասած տարօրինակությունները:

Զավեշտական զրույցների մեջ հատուկ շարք են կազմում նաև արևելյան հայտնի վիպական կերպար Նասրեդտին խոջայի շուրջ հորինված զրույցները, որոնցից տեղեկանում ենք, թե այդ հանրահայտ կերպարը ապրել է Թուրքիայում, և նրա գերեզմանը գտնվում է Աքսարայում: Պոլսահայոց շրջանում Նասրեդտին խոջայի զավեշտական, բայց և ուսանելի զրույցների այսքան տարածվածությունը (11 միավոր) վկայում է հայ և թուրք ժողովուրդների դարավոր համակեցության, մշակութային ազդեցությունների ու փոխազդեցությունների մասին:

5. ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (21 միավոր): Ձևով՝ սեղմ, բովանդակությամբ՝ այլաբանական այս ստեղծագործություններում պոլսահայերը կենդանական կերպարների միջոցով գեղարվեստորեն պատկերում են մարդկանց հոռի և արգահատելի արատները՝ ստախոսությունը («Գայլերը և հովիվը»), ագահությունը («Օձը և Մարդը», «Ձուկը և Մարդը»), խորամանկությունը («Առյուծը անտառի թագավոր»), խաբեբա-

յությունը («Սգավոր Քեքլիկը», «Փիրե-ոջիլը»), մեծամտությունը («Ուղտը և Ճանճը»), երախտամոռությունը («Կրիան և Կարիճը», «Գորտը և Մուկը): Այս ստակներում չարը միշտ պատժվում է: Որոշ առակներում բարի և անմեղ կենդանիների օրինակով գովերգվում են հնարամտությունը («Շունին խելացի տերը»), երախտապարտությունը («Երախտագետ Արջը», «Տելփիններու շնորհակալությունը», «Զգայուն ճայերը») և այլ բարոյական արժանիքներ:

6. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (54 միավոր): Այս կարգի ժողովրդական բանավոր ստեղծագործություններն իրական, տեղային հենք ունեն, որոնք փոքր ծավալի մեջ գեղարվեստական հյութեղ գույներով պատկերում են Թուրքիայի տարբեր գավառների հայության յուրահատուկ կենցաղը, ինքնատիպ բարքերը, բարոյականության վերաբերյալ նրանց ունեցած տարբեր չափանիշները: Կ. Պոլիսը անցյալում «Պզտիկ Փարիզ ըլլալ կը հավակներ», և գավառներից Պոլիս եկած, թուրքերեն չգիտցող, դեռևս իրենք իրենց չգտած, խեղճ ու կրակ գավառացիները («գրսեցիներ») շփվելով նոր միջավայրի հետ, հաճախ ապրել են շփոթվածության, չհասկացված և նույնիսկ խաբված լինելու բարդույթը («Թուրքերեն չգիտցող գավառացին», «Գավառացին Քերայի մեջ», «Կեսարացին և պոլսեցին»): Հոգեբանական այդ վիճակները զավեշտական իրավիճակներ ստեղծելով հանդերձ, նաև լուռ դրամայի պատճառն են դարձել:

Կենցաղային բնույթի այս զրույցներում մտերմիկ հեգնանքով են շեշտադրված յուրաքանչյուր ազգագրական խմբին բնորոշ առանձնահատկությունները: Անմոռաց պատկերներով են նկարագրված կեսարացիների ճարպկությունը («Կեսարացի հայրը և տղան, «Կեսարացի աղջիկը և հրեա փերեզակը», «Կեսարացի Նազարը»), թոմարզացիների պատրաստաբանությունը [«Թոմարզացիին պատասխանը», «Թոմարզացիները և օդանավը», «Թոմարզացի «Կոճակը» և մածուն ծախող թեյզեն» (մորաքույրը)], թեքիրդաղցիների խնայասիրությունը («Թեքիրտաղցի սկսեսուրը»), յոզղատցիների նահապետականությունը («Յոզղատցի Փիրուզը», «Յոզղատցի նշանվածները», «Փլած գացած յոզղատցի աղջիկը»), ադանացի հարսների չխոսկանությունը («Ադանացի հարսը»), ակնցիների միամտությունը («Գավառացի և ակնցի պանդոկապետը»), մուսալեռցիների ինքնապաշտպանական ոգին («Մուսալեռցի պապուկին էշուկները), ինչպես նաև այլ տեղավայրերի հայության ինքնատիպ վարք ու բարքի, կենցաղի և սովորույթների բնորոշ հատկանիշները:

Ողբերգակատակերգային այս թեմատիկան իր հետագա զարգացումն է ապրում՝ պատկերելով արտասահմանյան երկրներ գաղթած հայ գավառացիների այլայլված և շվոթահար վիճակը («Ֆրանսերեն չգիտցող գավառացին», «Զեյթունցին Ֆրանսայի մեջ», «Թոմարզացիները Ամերիկայի մեջ»):

Ուշագրավ են նաև տարբեր ժողովուրդների վարք ու բարքը, նիստ ու կացը, իմացական և բարոյական ըմբռնումների չափանիշները, ինչպես նաև այլ ժողովուրդների հետ հայերի ունեցած վերաբերմունքը պատկերող, հանկարծակի ավարա ունեցող նորավեպային զրույցները, օրինակ՝ «Հրեային օգնող հրեան», «Խելացի հրեան», «Հրեա հոր խրատը», «Սգավոր Մաննիկը և հույն դրացին», «Ճամբորդ լազը», «Ալպանացին և ձիթայուղին շիշը», «Յուկոսլավ վարդապետը», «Պարսիկի պես մի՛ նետեր», «Այլազգ ոստիկանապետը», «Երեք ընկեր», «Ատափազարցի կինը և թուրք կայարանապետը» և այլ կենցաղային զրույցներ: Սրանց մեջ մշտապես նկատե-

լի է հայերի բարի-դրացիական հարաբերություններն այլազգիների հետ, ինչպես նաև իրենց արժանապատվությունը բարձր պահող հայերի անհողդողդ կամքի ուժը («Կեսարիո տեր հայրը և այլազգները», «Հայոց այբուբենի հմայքը») և ազգային ինքնության ոգին:

7. ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐ (71 միավոր): Մեր գրառած բանահյուսական նյութերի մեջ առանձին բաժին են կազմում պատմական բովանդակությամբ զրույցներն ու հուշապատումները, որոնք ժամանակագրական հաջորդականությամբ գեղարվեստորեն վերարտադրում են պատմական հետևյալ դեպքերն ու դեմքերը.

- Կ. Պոլսի առումից հետո Օսմանյան կայսրության հիմնադրման շրջանում սուլթան Ֆաթիհ Մեհմեդ II-ի անմիջական նախաձեռնությամբ նոր մայրաքաղաք Ստամբուլում 1461թ. Թուրքիայի Հայոց պատրիարքության հիմնադրումը՝ Հովակիմ պատրիարքի գլխավորությամբ:
- Սուլթան Մահմուդ II-ի տիրակալության օրոք Ստամբուլի ծաղկմանն ու բարգավաճմանը մեծապես նպաստած՝ սուլթանի խորհրդական, ծագումով հայ Հարություն Պեզճյան ամիրան, փողերանոցի պետ Տյուզյան ամիրա եղբայրները, իրարհաջորդ ճարտարապետներ Պալյան ամիրաները, ինչպես նաև տաղանդավոր դերասաններ (Մարտիրոս Մնակյան, Հակոբ Վաքդովյան, Մարի Նվարդ), հայտնի երաժիշտներ (Թադեոս էֆենդի, Քեմանի Սարգիս, Ուդի Հրանդ), մտավորականներ (Հակոբ Մարքայան), որոնք անսահման նվիրվածությամբ սատարել են իրենց բնիկ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքին:
- Սուլթան Համիդ II-ի գահակալության տարիներին քրիստոնյաների, ընդորում, նաև հայերի նկատմամբ գործադրված բռնությունները, որոնց ընթացքում հայ պատրիարքները (Մկրտիչ Խրիմյան, Ներսես Վարժապետյան, Մաղաքիա Օրմանյան) իրենց խելամիտ և ձեռնհաս գործունեության շնորհիվ կարողացել են պահպանել հավասարակշռությունը՝ առանց խորացնելու ստեղծված պատմական կացությունը:
- Արևմտահայության համար Առաջին աշխարհամարտի դաժան տարիներին (Զավեն Տեր-Եղիայան պատրիարքի կրկնակի գահակալության օրոք) հազարավոր որբացած մանուկների և այրիացած կանանց պատսպարումը Գալֆայան, Գարակյոզյան որբանոցներում և Ս. Փրկիչ հիվանդանոցի հովանու ներքո:
- Գարեգին Ա Խաչատուրյան, Շնորհք Գալուստյան և Գարեգին Բ Գազանճյան պատրիարքների հայրապետական գործունեությունը:
- Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա վեհափառի այցը Թուրքիա և նրա սրտառուչ հանդիպումները հայ համայնքի հետ:
- Շահեն Սվաճյան և Մեսրոպ Մութաֆյան սրբազանների դերը հայ համայնքում:
- Մեսրոպ Մութաֆյան սրբազանի աստվածահաճո քարոզների ազդեցությունը հայ համայնքի մեծ ու փոքր ներկայացուցիչների վրա և նրա առաքելագործ ջանքերով վերակառուցված Կեսարիայի և Մուսա լեռան Վազքֆ գյուղի եկեղեցիների վերաբացման արարողությունները:

Պատմական իրադարձություններով առլեցուն այս ժամանակաշրջանն հերթագայող դեպքերի ու դեմքերի մի ամբողջական շղթա է կազմում, որն օղակ առ օղակ բացահայտվում է պատմական արժեք ներկայացնող ժողովրդական փաստալի զրույցներով: Հետաքրքրաշարժ է «Սուլթան Համիտը և Օրմանյան պատրիարքը» պատմական զրույցը.

«Օրին մեկը Ապտյուլ Համիտի խորհրդականները կ'ըսեն անոր.

- Սուլթա՞ն, գիտե՞ս, որ հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյան առանց աղոթելու ճաշի չի նստիր: Ան ճաշեն առաջ անպայմա՛ն խաչ կը հանե:

- Իրա՞վ կըսեք: Անանկ է նե, օր մը գինքը ճաշի հրավիրենք, տեսնանք ճաշեն առաջ իմին դեմս պիտի համարձակվի՞ խաչ հանել:

Ապտյուլ Համիտը կը հրամայե մեծ ճաշկերույթ մը պատրաստել ե հրավիրել հայոց պատրիարքը:

Մաղաքիա Օրմանյան իր պատկառազդու տեսքով կը ներկայանա սուլթանին: Կը տեսնա պատրաստված ճոխ սեղանը:

Բոլորը սեղանի շուրջ կը նստին: Դեռ ուտելու չսկսած Օրմանյան պատրիարքը աջ ձեռքը վեր կը բարձրացունե, իբր ձեռքով ցույց կուտա սեղանին վրա դրված տեսակ-տեսակ ճաշերը, բայց աննկատորեն խաչակնքելով կ'ըսե.

- Առաջ՝ ա՛ս պիտի ուտենք, ետքը՝ ա՛ս պիտի ուտենք, ետքը՝ ա՛ն, պիտի ուտենք, վերջն ալ՝ ա՛ն: Ուրեմն՝ Ամե՞նը, - կ'ըսե ու կ'սկսի ուտել:

Ճաշկերույթը կը լմննա: Օրմանյան պատրիարքը շնորհակալություն կը հայտնե ընդունելության համար, հրաժեշտ կուտա, կերթայ:

Սուլթան Համիտը ուրախ-ուրախ կ'ըսե իր խորհրդականներուն.

- Տեսա՞ք, որ հայոց պատրիարքը ինծմե վախցավ և խաչ չի կրցավ հանել:

Խորհրդականները կ'ըսեն.

- Կը սխալիք, Սուլթա՞ն, հայոց պատրիարքը, երբ ճաշեն առաջ ձեռքով կը ցուցուներ սեղանին դրված ուտելիքները, իր ձեռքի շարժումներով արդեն իսկ խաչակնքեց սեղանը, բայց անանկ մը խաչակնքեց, որ դու չնշմարեցիր»:

Պոլսահայոց բանահյուսությունը հարուստ է նաև ՉԱՓԱԾՈ, ՔՆԱՐԱԿԱՆ բնույթի ժողովրդական ստեղծագործություններով, որոնք գեղարվեստորեն արտացոլում են իրենց շրջապատող բնությունից և հասարակական կյանքից ստացած բազմազան տպավորությունները, խոհերն ու հույզերը, խինդն ու սերը, վիշտն ու տառապանքը: Երգը ուղեկցել է նրանց ողջ կյանքի ընթացքում: Պոլսահայերի երգերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ (5 միավոր), որոնք իրենց ժանրային առանձնահատկությամբ մանկանը օրորելու, քնեցնելու մայրական գողտրիկ երգերն են («Օրո՞ր, իմ խուշիկ», «Քնացնեմ իմ աղավնիս») և այլն:

2. ՍԱՆԿԱԽԱՂԱՑ ԵՐԳԵՐԸ (14 միավոր) մեծահասակների կողմից հորինված, տարբեր տարիքի մանուկներին զվարճացնելու, զբաղեցնելու, երգային խաղեր են, որոնք արտասանվում են պարզագույն լեզվով («Էղրիկ-մեղրիկ», «Տան-տան», «Ծափիկ, ծափիկ» և այլն):

3. ՍԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ (8 միավոր) հորինված են մեծ մասամբ մանուկներին հասկանալի լեզվով՝ գաղափար տալու մանկական աշխարհի հետաքրքրությունների մասին, որոնք և պայմանավորելու են անհատի հետագա զարգացումն ու ինքնաճանաչումը («Կլորիկ-թոմպուլիկ», «Աղջիկ մըն եմ գեղադեմ», «Երբ որ ես մեծնամ», «Հայ եմ ես»):

4. ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐԸ (4 միավոր) դպրոցականների համար են կամ նրանց հորինած երգերն են, որոնց նպատակն է պատանիների և պարմանուհիների մեջ կամային ու բարոյական հատկություններ սերմանել («Ողջույն, տաճար իմաստության», «Արմաշի Դպրեվանքի օրհներգը», «Կամք, աշխատանք և կորով»):

5. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐԸ (23 միավոր) միջնադարյան հայրենների նմանակությամբ հորինված ժողովրդական խաղիկներն են, որոնք արտահայտում են հոգեկան նուրբ ու քնքուշ զգացումներ: Իսկ «Մեր տունն է ձեր տան դիմաց», «Վարդ քաղելեն կու գաս, յա՜ր», «Միրտս կը թռի՝ ջաղցի քարին պես» սիրային քնարական երգերը երբեմնի գեղջկական ստեղծագործությունների արձագանքներն են:

6. ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ (4 միավոր): Անցյալում Թուրքիայի գավառներից պանդխտած հայերի համար Կ. Պոլիսը մի հանգրվան էր, որտեղ նրանք գալիս էին աշխատելու, դրամ վաստակելու, որպեսզի այն իրենց հարազատներին ուղարկեն, իսկ հայրենի եզերքից խաբրիկ ակնկալող հայ պանդուխտը կարոտով լի երգել է. «Կանչե՛, կոռ՜ունկ, կանչե՛» և կամ ինքն իրեն է հուսադրել՝ «Հումբերե, հոգիս, համբերե»՝ մրմնջալով:

7. ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ համալրում են մկրտության, պսակադրության և հուղարկավորության ծեսերի վերաբերյալ մեր գրառած ազգագրական նյութերը:

Ա. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ (19 միավոր): Հարսին գովերգելով հանդերձավորելու, նրա օժիտը հանդիսավոր կերպով փեսայի տունը տանելու ծիսական արարողական երգերի հնաբույր նշումներ են. «Քարվան էլավ Հալպու քաղքեն», «Աղջիկն ալ կը տանին լալով, ողբալով», իսկ առավել լավատեսական են «Երանի քեզ, ա՜յ աղջիկ», «Տեր պապան պսակ կ'ընե» ծիսական երգերը:

Բ. ՏՈՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ (34 միավոր): Պոլսահայերը սրբությամբ պահպանում են ոչ միայն իրենց հնամենի եկեղեցիները, այլև հեթանոսական ակունքներ ունեցող քրիստոնեական ու տերունական տոները և այդ տոների ժամանակ կատարված ժողովրդական երգերը («Ս. Ծնունդի երգ», «Խթումի երգ», «Կաղանդի երգ», Զատիկը եկավ», «Համբարձման և Վարդավառի վիճակահանության երգեր ու մանիներ»), որոնք հորինվել են ոչ միայն հայերեն, այլև թուրքերեն:

8. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՈՒ ԶԱՎԵՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ (11 միավոր) մեծ մասամբ խրախճանքների ժամանակ երգվող, ծիծաղ հարուցող ստեղծագործություններ են «Պսակվելես առաջ հանգիստ կ'ապրեի», «Աղջկան՝ կարմիր ֆիստան», «Մանտոլին չալելեն-չալելեն», ինչպես նաև «Շարժի՛ր, շարժի՛ր, թաշկինակը», «սո՜ւտ է, սո՜ւտ է», «Հալա, հալա, հալա, Նինոյի» զավեշտական խոսքերով պաթերգերը, որոնք կոչված են ներկաների մեջ ցնծալի տրամադրություն հարուցելու:

9. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ (9 միավոր): Պոլսահայերը ոչ միայն բարեպաշտ են այլև՝ բնապաշտ: Նրանց համար հավասարապես ներշնչանքի աղբյուր են և՛ Մարմարայի կապուտակ ծովը («Ծովին վրայ»), և՛ սաղարթախիտ անտառը («Անտառ գացի»), և՛ երկնքի անհունի մեջ ազատորեն ճախրող թռչունները («Հաշհատիկ-Արագիլ»), և՛ թավիշ մարգագետիններում արածող կենդանիները («Միրուն, անմեղ իմ գառնուկ»), և՛ հուռթի բնության պարգևած պես-պես բարիքներն ու պտուղները («Որտեղ ինչով է հայտնի»):

ԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ բաժնում գրառված նյութերը քանակապես ավելի շատ են.

1. ԱՌԱԾ-ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐ (370 միավոր): Բանահյուսական այս ժանրի մեջ սեղմ ու պատկերավոր կերպով արտացոլված են պոլսահայոց հասարակական կյանքի պատմական, կենցաղային պայմանները, նրանց

բնավորության և խառնվածքի առանձնահատկությունները, բարոյական հասկացությունները, ազգային սովորույթները, հավատալիքներն ու կրոնը, հոգեբանությունն ու աշխարհայացքը: Օրինակներ՝ «Գացինք Թոխաթ, դարձանք սախաթ», «Բանը՝ օրվան, դերդը՝ տարվան», «Արհեստ ունեցողը մինչև ցերեկ անոթի կը մնա, չունեցողը՝ մինչև գիշեր», «Մզկիթը ինչքան ալ մեծ ըլլա, մոլլան իր գիտցած «ալլահու աքբարը» պիտի կարդա», «Փնտրողը Աստուած է գտեր»:

2. ԽՐԱՏԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ (200 միավոր) բարոյախոսական ասույթներ են, որոնք ուսուցողական, դաստիարակիչ նպատակ ունեն և մեծ մասամբ կյանքի վտրձությամբ իմաստնացած ավագ սերնդի հորինածներն են: Խրատական ասացվածքները անփորձ երիտասարդներին սպառնացող վերահաս վտանգը կանխող և նախազգուշացնող հանգամանք ունեն՝ հորդորական հրամայականով արտահայտված, ինչպես՝ «Մի՛ վստահիր ուժիդ, դրամիդ, գեղեցկությանդ՝ անցավոր են», «Երջանիկ ըլլալե ավելի՝ նմանդ երջանկացուր», «Միակ բանը, որ պիտի մնա, եթե ունիս, առաքինությունդ և բարիքներդ պիտի մնան՝ կոթող», «Հիշե՛, որ մերկ եկար աշխարհ և մերկ պիտի մեկնիս աս աշխարհեն»:

3. ԱՆԵԾՔՆԵՐ (50 միավոր): Պոլսահայերը շատ անեծքներ չունեն, քանի որ եկեղեցին ևս մշտապես սաստում է՝ «Մի՛ անիծիր»: Հետևաբար, նրանք վատ մարդու դատաստանը թողնում են Աստծո նախախնամությանը. «Աստուծմեն գտնաս, ինշալլա՞հ» և այլն:

4. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ (100 միավոր): Պատկերավոր և խորիմաստ ժողովրդական հակիրճ այս ստեղծագործությունները հագեցած են կենսասիրությամբ և արժանավոր մարդու նկատմամբ տածվող ջերմ ու քնքուշ վերաբերմունքով: Այս վտքրիկ բանաձևերի մեջ գնահատանքի չափանիշ են դառնում արևը՝ որպես կյանքի խորհրդանիշ, ինչպես նաև բնաշխարհի հողն ու ջուրը, ծաղիկն ու տերևը. «Արևդ պայծառ մնա», «Հող բռնես՝ կանաչ թող դառնա», «Ջուրի պես երկար կյանք ունենաս», «Քալած տեղդ՝ վարդ թող բուսնի», «Ձիթենու վրա ինչքան տերև կա, այնքան տարի թող ապրիս»:

5. ԴԱՐՁՎԱԾՆԵՐ (270 միավոր): Պոլսահայոց բանավոր խոսքը հեղեղված է պատկերավոր, խորիմաստ դարձվածներով ու թևավոր խոսքերով: Հանգամանք, որն անկրկնելի ու գունեղ է դարձնում նրանց բանավոր խոսքը. «Ջուրը պատեն վեր կը հանե» (դժվարացնել). «Դյուդյուկը չալել» (խոսքը առաջ տանել), «Լեզուն բերնին մեջ կը դառնա» (լեզվանի), «Կրակի գին» (սուղ), «Օրորոցը օրորել» (երախտիք ունենալ):

6. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ (42 միավոր) այլաբանորեն նկարագրում են առարկան և նրա հատկանիշները գաղտնագրված ձևով՝ գաղափար տալով մարդու մարմնի մասերի (սիրտ, ականջ, բերան, քիթ, աչք, լեզու), բնության երևույթների (արև, լուսին, անձրև), բույսերի (սոխ, կիտրոն, արևածաղիկ), կենդանիների (ձուկ, օձ, հնդկահավ), ինչպես նաև մարդկային քաղաքակրթության նվաճումների (եկեղեցի, գիրք, ժամացույց, ջութակ) և այլնի մասին: Օրինակ՝ «Ան ի՞նչն է.

Մարդուն ամենեն լաւ բարեկամն է.
Գեշություն չունի, չարութուն չունի,
Հաց չուզեր, ջուր չուզեր,
Նեղություն չի տար.
Բայց՝ օգուտ կու տա» (Գիրք):

7. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐԸ (5 միավոր) միանման բառերի և հնչյունների շարահարություններն են, որ հարկ է առանց սխալվելու արտասանել: Օրինակ՝ «Ձուկը ուտեմ, մուկը նետեմ, մուկը նետեմ, ձուկը ուտեմ»:

8. ՀԱՆԳԱՎՈՐ ԱՄՈՒՅԹՆԵՐԸ (23 միավոր) հանգավորված, ներդաշնակ ու երաժշտականացված երկխոսական ասույթներ են՝ հաճախ օգտագործվող առօրյա բանավոր խոսքի մեջ: Օրինակ՝

« - Հա՛մմե: « - Փա՛ռք քեզ, Տե՛ր:
- Շաքա՛ր ծամե» կամ՝ - Պեքեարները (ամուրի) կարգե, Տե՜ր»:

9. ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ (28 միավոր): Թեպետ պոլսահայերը հավատացյալ քրիստոնյաներ են, սակայն դեռ մինչև օրս առօրյա կենցաղում պահպանվում են սնահավատության որոշ վերապրուկներ, որոնք առավել քան վերածվել են պատկերավոր խոսքի, ինչպես, օրինակ՝ «Եթե աչքդ խաղա՝ հյուր պիտի գա», «Եթե աղը թափվի՝ տունին մեջը կռիվ պիտի ըլլա», «Եթե շաքարը թափվի՝ տունին մեջը սեր-մուհապեթ կ'ըլլա»:

10. ԱՂՈԹՔՆԵՐ (20 միավոր): Պոլսահայերը, ընդ որում նաև թրքախոսները, գրեթե բոլորն անխտիր գիտեն տերունական «Հայր մերը» և ուրիշ աղոթքներ: Սակայն հմայական բնույթի աղոթքները ոչ բոլորին են հայտնի, այլ՝ միայն «գերբնական զորությամբ օժտված» անհատներին: Քանի որ այդ աղոթքները արգելված (տաբու) են համարվում, և բանասացները հավատում են, որ բարձրաձայն արտասանելիս կզրկվեն ի վերուստ իրենց տրված շնորհքից, ուստի բավական դժվար էր հայտնաբերել և գրի առնել «Չար աչքի», «Չար Նազարի», «Օձը խայթածի», «Մանկան վտրացավի» և այլ հմայական բնույթի աղոթքները:

Այս բաժնում առանձին շարք են կազմում Տեր Հիսուս Քրիստոսին, ինչպես նաև Ս. Մարիամ Աստվածածնին, Ս. Սարգսին, Հովհան Ոսկեբերանին և այլ սրբերին ուղղված հայերեն, ինչպես նաև թուրքալեզու աղոթքները.

«Յաթդըմ սաղըմա, դյոնդիմ՝ սոլըմա,
Մելեքլեր շահիդ օլսուն դինիմի,
իմանըմա.
Ալլահ՝ բաշ, Հիսուս՝ յոլդաշ.
Քիմ քիմե քյոթյուլըք յափարսա՝
Աղզը՝ քիլիթ, դիլի՝ թոշ.
Ամեն»:

«Պառկեցի աջ կողմիս, դարձա ձախ կողմիս,
Հրեշտակները թող վկա լինեն
կրոնքիս և հավատքիս.
Աստված գլխավորս է, Հիսուս՝ ուղեկիցս.
Ով մեկին վատություն անի՝
Բերանը՝ կղպվի, լեզուն քար դառնա.
Ամեն»:

Ժողովրդական այս ստեղծագործությունները ժանրային առումով գողտրիկ աղերս-խնդրանքներ են, որոնք Երկնավորից հայցում են ոչ այնքան նյութական բարեկեցություն, որքան ոգեղեն շնորհներ, որոնք ոչ միայն անձնական են, այլև՝ անանձնական.

«Ամենասուրբ Երրորդությո՜ւն,
Տո՜ւր հիվանդաց բժշկություն
Եվ մեր մեղացս՝ թողություն,
Ազգիս հայոց՝ սեր-միություն
Եվ աշխարհիս՝ խաղաղություն.
Ամեն»:

Այսպիսով՝ սփյուռքահայության ներկայիս մշակութային տարրալուծման պայմաններում մեր անձնական նախաձեռնությամբ գրի առնված և

կորստից փրկված խնդրո առարկա բանահյուսական նշխարներն իրենց պատմաճանաչողական արժեքով դառնում են արդի պոլսահայոց ավանդապահության մակարդակի առարկայական վկայությունները:

АРМЯНСКАЯ ОБЩИНА КОНСТАНТИНОПОЛЯ И ЕЕ УСТНОЕ НАРОДНОЕ ТВОРЧЕСТВО
(по этнографическим наблюдениям 1996 и 1997 гг.)

В. Г. СВАЗЛЯН

Резюме

Армянское Патриаршество Турции (основанное в 1461г.) как в прошлом, так и в настоящем организовывает и руководит религиозными, образовательными, благотворительными, литературными и художественными мероприятиями армянской общины.

В Стамбуле насчитывается 60 тысяч армян, а в провинциях 5 тысяч. Здесь армяне имеют 42 церкви, 18 школ. Издаются газеты "Жаманак", "Нор Мармара", "Акос", патриаршеский орган "Лрабер", церковно-культурный журнал "Шогакат" и ежемесячный журнал национальной больницы "Сурп Пркич".

В результате поездок (1996 и 1997гг.) нам удалось записать и спасти от неминуемой гибели фольклорные материалы эпического, лирического и фразеологического характера, а также энтографические материалы (всего 1517 единицы).

Эти своеобразные и самобытные материалы дают представление о переселившейся из провинции и поселившейся в Стамбуле современной армянской общине Константинополя, о ее прошлом и настоящем.